ՀՀ Գեղարքունիքի մարզի Արփունք համայնքի ավագանու
15.02.2017 Թիվ 6 որոշում
Քաղվածք

<< ՀՀ Պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառած վնասների հատուցման մասին>> ՀՀ Օրենքի պահանջներից ելնելով Համայնքապետարանի աշխատակազմի աշխատողներից 1000-ական դրամ գանձելու մասին

Համայնքի ավագանին որոշեց

1. Հիմք ընդունելով << ՀՀ Պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառած վնասների հատուցման մասին>> 2016թ. Դեկտեմբերի 15-ի ԹԻՎ ՀՕ _245 ՀՀ Օրենքի դրույթները և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի համապատասխան գրությունը պահանջել համայնքապետարանի աշխատակազմից սահմանված կարգով ամենամյա աշխատավարձերը և դրանց հավասարեցված վճարները հաշվարկելիս առաջնորդվել վերոհիշյալ օրենքի դրույթներով ,աշխատողների աշխատավարձերից 1000-ական ՀՀ դրամներ ժամանակին փոխանցել ՀՀ Ֆինանսների Նախարարության կենտրոնական գանձապետարանի 900005001186 հաշվին;

Ավագանու անդամներ
1. Ռ. Լալայան
2. Մ. Պրուտյան
3.Վ. Մելիքյան

Համայնքի ղեկավար՝ Ս. Ասլանյան

քարտուղար՝ Մ. Հովհաննեսյան

ՀՀ Գեղարքունիքի մարզի Արփունք համայնքի ավագանու
04.04.2017 Թիվ 8 որոշում Քաղվածք

Արփունք Համայնքի բնակիչ Վանիկ Մնացականյանի դիմումի քննարկումը կապված իր դստեր Նարինե Մնացականյանի ուսման Վճարի մասնակի փոխհատուցման հետ

Համայնքի ավագանին որոշեց

1. Բավարարել համայնքի բնակիչ՝ Վանիկ Մնացականյանի խնդրանքին և տալ ու համաձայնություն համայնքի բյուջեից որպես աջակցություն փոխհատուցելու նրա դստեր Վ. Համբարձումյանի անվան մանկավարժական ինստիտուտի ուսանողուհի՝ Նարինե Մնացականյանի 2017թ. ուսման վճարի չվճարված 60000 (վաթսուն հազար)դրամ;
2.Պահանջել համայնքի ղեկավարից և համայնքապետարանի աշխատակազմից սահմանված կարգով կատարելու վերոհիշյալ ուսման վարձի փոխհատուցման գործընթացը և այդ մասին իրազեկել համայնքի ավագանուն ;

Ավագանու անդամներ
1. Ռ. Լալայան
2. Մ. Պրուտյան
3.Վ. Մելիքյան

Համայնքի ղեկավար՝ Ս. Ասլանյան

քարտուղար՝ Մ. Հովհաննեսյան

ՀՀ Գեղարքունիքի մարզի Արփունք համայնքի ավագանու

25.03.2017 Թիվ 7 որոշում քաղվածք

Համայնքում հոգևոր ,մշակույթային և սպորտային կյանքի բարելավման նպատակով իրականացվող << Ազնվական արմատ>> ծրագրի համար որպես ներդրում համայնքի բյուջեից ֆինանսական հատկացումներ կատարելու մասին

Համայնքի ավագանին միաձայն որոշեց

1.Տալ համաձայնություն համայնքում իրականացվող << Ազնվական արմատ>> ծրագրի համար որպես ներդրում համայնքի բյուջեի ֆոնդային մասից հատկացնել 379.300 (երեք հարյուր յոթանասունիննը
Հազար երեք հարյուր) դրամ գումար ;

2.Պահանջել համայնքի ղեկավարից և համայնքապետարանի աշխատակազմից սահմանված կարգով իրականացնելու անհրաժեշտ ֆինանսակլան ներդրումը և հետևել ու դրանց նպատակային օգտագործմանը;

3.Համայնքում իրականացվող ծրագրի ղեկավար հաստատել համայնքի բնակիչ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Մելանիյա Հովհաննեսյանին

4.Ծրագրի իրականացման գործընթացի կազմակերպման և ներդրման ներդրման միջոցների նպատակային օգտագործման ուղղությամբ տարվող աշխատանքների վերաբերյալ պարբերաբար իրազեկ պահել համայնքի ավագանուն և ազգաբնակչությանը;

Ավագանու անդամներ
1. Ռ. Լալայան
2. Մ. Պրուտյան
3.Վ. Մելիքյան

Համայնքի ղեկավար՝ Ս. Ասլանյան

քարտուղար՝ Մ. Հովհաննեսյան